ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2024թ-ի հունվարի 11-*ի*

Հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝ Արտակ Արմենի Ղազարյանը

_____

Տպագրված է ընդամենը երեք օրինակ

Օրինակ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«_06_»_____02_____ 2024թ.

Գրանցման համար

_____211.171.1368681_____

Հարկ վճարողի հաշվառման համար

_____0178681_____

_____/_____
_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2024թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Սահմանադրական հետազոտությունների,օրենսդրության զարգացման և բարեփոխումների մշտադիտարկան կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպության անվանումն է՝ «Սահմանադրական հետազոտությունների, օրենսդրության զարգացման և բարեփոխումների մշտադիտարկման կենտրոն» հասարակական կազմակերպություն:

1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 8շ., բն 65, էլ. հասցե՝ ccsldcenter@gmail.com:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

Սահմանադրական, քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, վարչական, վարչական դատավարության, միջազգային և իրավունքի այլ ճյուղերի հիմնահարցերի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, մենագրությունների, գիտագործնական ձեռնարկների, հոդվածների, զեկույցների և գիտական բնույթի այլ հետազոտույթյունների իրականացումն ու հրապարակումը:

Կազմակերպությունը նաև իրականացնելու է իրավական ակտերի (օրենսդրության) մշտադիտարկում, վեր հանելու խնդրահարույց իրավական կարգավորումները, պատրաստելու է իրավական ակտերի (այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների, լրացումների) նախագծեր:Կազմակերպությունն իրականացնելու է նաև նախագծման փուլում գտնվող կամ գործող իրավական ակտերի փորձաքննություն՝ Սահմանադրությանը, ՄԻԵԿ-ին համապատասխանության, ներքին իրավունքում փոփոխության հիմնավորվածության, ներդաշնակության, արդյունավետության, նպատակի իրագործելիության և այլ դիտանկյուններից:Կազմակերպությունը նաև իրականացնելու է ուսուցողական, վերապատրաստական և այլ մանկավարժական բնույթի գործունեություն:

Կազմակերպությունը իրականցվող և իրականցված բարեփոխումների շրջանակներում իրականացնելու է մշտադիտարկում՝ փորձելով վերհանել

առկա թերությունները, մշակել և իրականացնել դրանք լավարկելուն ուղղված միջոցառումներ:

2.2. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

3.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

3.4 Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

3.5 Կազմակերպության անդամների համար անդամավճար չի սահմանվում:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,

2) ներկա գտնվել ժողովին անձամբ,

3) ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,

4) դիմում ներկայացնել ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, դիմում ներկայացնել ստանալու նրանց ընդունած որոշումների էլեկտրոնային պատճենները,

5) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության

փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը (եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի), որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

7)իրականացնել գիտահետազոտական գործունեություն,

8) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

3) Կազմակերպության գործադիր մարմնի՝ Նախագահի սահմանած ժամկետում և կարգով կազմել, կատարել և մասնակցել Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին, միջոցառումներին, Կազմակերպության նպատակներին հասնելու այլ գործողությունների իրականացմանը:

4) պարբերաբար (առնվազն՝ տարին մեկ անգամ) Կազմակերպության էլեկտրոնային փոստին ներկայացնել (վերահաստատել) իր հետ կապվելու միջոցների մասին տվյալներ՝ բջջ. հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ դրանց փոփոխության դեպքում՝ անմիջապես, բայց ոչ ուշ քան մեկամսյա ժամկետում ներկայացնել փոփոխված տվյալները:

5) պարբերաբար (առնվազն՝ տարին մեկ անգամ) հրապարակել գիտական հոդված և/կամ հանդես գալ գիտական զեկուցմամբ, և/կամ հրապարակել գիտական բնույթի այլ աշխատություն (մենագրություն, գիտագործնական վերլուծություն և այլն), որոնք առնչում են Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների հետ և ոչ ուշ քան ամեն տարվա դեկտեմբերի 20-ը ներկայացնել իր կատարած այդ գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

4.3 Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը:

5.2 Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

5.3 Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան

արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային այլ եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

5.4 Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

5.5 Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

5.6 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Նախագահի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

9) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

13) Կազմակերպության գործունեության կասեցման մասինորոշման ընդունումը,

14) Կազմակերպության գրանցման հասցեի փոփոխության մասին որոշումը,

15) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

5.7 Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը

ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

5.8 Նախագահն ընտրվում է ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

5.9 Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

5.10 Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է ժողովի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը,

11) ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից, Կազմակերպության անդամին տալիս է Կազմակերպության նպատակների իրականացումից բխող և կատարման համար պարտադիր հանձնարարություններ (իրավական ակտի փորձաքննության, իրավական ակտի մշակման, ճյուղային իրավունքի վերաբերյալ գիտական վերլուծության, ուսուցողական բնույթի միջոցառումների կազմակերպման, մասնակցության և այլն)

12) իրականացնում է Կանոնադրությամբ և/կամ օրենքով իրեն վերապահված (սահմանված) այլ լիազորություններ:

5.11 Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

5.12 Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.13. Կազմակերպությունը ունի նաև քարտուղար, որը զբաղվում է կազմակերպության ժողովի արձանագրությունների վարման/կազման հարցերով:

Կազմակերպության քարտուղարը.

- կազմակերպում է Կազմակերպության ողջ գործավարությունը, Կազմակերպության անդամների հաշվառումը,
- քննարկում և նախագահի հասատմանն է ներկայացնում Կազմակերպության անդամ դառնալու դիմումները,
- կատարում է Կազմակերպության նախագահի կողմից տրված այլ հանձնարարություններ:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն որպես սեփականություն պատկանող գույքով:

6.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

6.3 Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) կազմակերպության անդամների ներդրումները,
2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
4) դրամական մուտքերը պետական բյուջեից,
5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
6) հանգանակությունները,
7) օրենքով չարգելած այլ միջոցներ:

6.4 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել Կազմակերպության անդամների կատարած աշխատանքի վարձատրության, պարգևատրման և Կազմակերպության նպատակներին հասնելու ու խնդիրները լուծելու ուղղությամբ իրականացված աշխատանքների կատարման համար վճարման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

VII. ԿԼՈՍՄԼԿԵՐՊՈՒԹՅԼՆ ՎԵՐԼԿԿԼՈՍՄԼԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒՇԼՐՈՒՄԸ, ԼՈՒՇԼՐՄԼՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԼԳՈՐԾՈՒՄԸ

7.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

7.2 Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 11 հունվարի 2024թ. և բաղկացած է 8 թերթից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Սույն արձանագրությունը կազմված է 11.01.2024թ., ք.Երևան, բաղկացած է մեկ թերթից:

Ժողովի օրակարգը՝
1) Կազմակերպության հիմնադրում,
2) Կազմակերպության կանոնադրության հաստատում,
3) Կազմակերպության գործադիր մարմնի՝ Նախագահի և քարտուղարի ընտրություն,
4) Կազմակերպության պետական գրանցման հարց:

«Սահմանադրական հետազոտությունների, օրենսդրության զարգացման և բարեփոխումների մշտադիտարկման կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադիր ժողովը գումարվել է 11.01.2024թ., ք. Երևան:
Հիմնադիր ժողովին մասնակցելու իրավունք ունեին և մասնակցում էին Կազմակերպության բոլոր հիմնադիրները՝ Արտակ Արմենի Ղազարյանը, Ալինա Մարտիրոսի Փխրիկյանը, Աիդա Արսենի Թադևոսյանը:
Միաձայն հիմնադիր ժողովի նախագահող ընտրվեց Արտակ Արմենի Ղազարյանը, քարտուղար՝ Ալինա Մարտիրոսի Փխրիկյանը:

Ամփոփելով քվեարկության արդյունքները Կազմակերպության հիմնադիր ժողովը ՄԻԱՁԱՅՆ որոշեց.

1) Հիմնադրել «Սահմանադրական հետազոտությունների, օրենսդրության զարգացման և բարեփոխումների մշտադիտարկման կենտրոն» հասարակական կազմակերպությունը,
2) Հաստատել Կազմակերպության կանոնադրությունը,
3) Արտակ Ղազարյան, նույնականացման քարտի տվյալներ՝ 005681424, տրված՝ 003-ի կողմից, 10.11.2017, վավերական է մինչև՝ 10.11.2027թ. ընտրել Կազմակերպության գործադիր մարմին՝ Նախագահ,
4) Դիմել ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Կազմակերպության պետական գրանցման համար:

Հիմնադիր ժողովի նախագահող՝ [Արտակ Արմենի Ղազարյան]

Հիմնադիր ժողովի քարտուղար՝ [Ալինա Մարտիրոսի Փխրիկյան]: